Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 489 - Ա որոշման

«Աջակցություն Մարի Իզմիրլյանի անվան մանկատան հատուկ կարիքներով երեխաներին»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	ՄԻՄ երեխաների սոցիալական ներառման և ինտեգրման համար բարենպաստ միջավայրի ստեղծում՝ ներառական խաղահրապարակի ստեղծման միջոցով, որտեղ տարբեր տարիքային խմբերի և տարբեր կարողություններով երեխաներ ու ընտանիքներ կարող են խաղալ և սովորել մանկատան երեխաների հետ միասին: 2004 թվականից ի վեր «Իզմիրլյան հիմնադրամն» աջակցում է «Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը», որտեղ ապրում են հաշմանդամություն ունեցող շուրջ 103 երեխաներ: Հիմնադրամը մշտապես իրականացնում է երեխաների կենսապայմանների, կրթական և այլ կարիքների բարելավմանն ուղղված տարատեսակ նախաձեռնություններ, որոնք համաձայնեցվում են տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Իզմիրլյան Բարեգործական հիմնադրամ, Մելիք-Ադամյան 2/1, կենտրոն 0010 Երևան, Հայաստան, ՀՎՀՀ՝ 02819088
4.	Ծրագիրը կատարողը	Իզմիրլյան Բարեգործական հիմնադրամ, Մելիք-Ադամյան 2/1, կենտրոն 0010 Երևան, Հայաստան, ՀՎՀՀ՝ 02819088
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Յաղուբյան փողոց, նրբանցք 13, բնագավառ՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	11,450,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն ՊՈԱԿ, Հայաստան, Երևան Յաղուբյան փողոց, նրբանցք 13, ՀՎՀՀ՝ 00841035
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մանկատան հարակից տարածքում կառուցել խաղահրապարակ՝ խաղասարքերի, մարզասարքերի, անվասայլակների համար հատուկ համալիրների, ռետինե ծածկի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 11,450,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Խաղասարքերի, մարզասարքերի, անվասայլակների համար հատուկ համալիրների, ռետինե ծածկի պատվիրման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 11,450,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որի հետ 2021 թվականի ապրիլի 5-ին ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է օժանդակել Մարի Իզմիրլյան մանկատան հատուկ կարիքներ ունեցող երեխաների (Շահառուներ) համար հարմարեցված տրանսպորտային միջոցների անվտանգ և պատշաճ հասանելիության ապահովմանը, մանկատան վերակագնողական կարողությունների բարձրացմանը, ինչպես նաև Շահառուների սոցիալական ներառման և ինտեգրման համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է ներառական խաղահրապարակում տեղադրվելիք խաղասարքերի ցանկի հաստատման, ծրագրին աջակցություն ցուցաբերելու և նվիրաբերված գույքի պահպանումը ծրագրի ավարտից հետո ապահովելու համար:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

17.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ